

Համարը N 166-Ս
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը Չի հրապարակվել
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.02.2009

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 19.02.2009
Ստորագրման ամսաթիվը 24.02.2009
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՋՐԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ ՀՀ-ԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվարի 2009 թվականի N 166-Ս

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՋՐԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի պահանջներով, Նոր Խարբերդի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով Երևան քաղաքի Շենգավիթ թաղային համայնքի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**։

1. Որպես Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերություն՝ ընդունել Երևան քաղաքի Շենգավիթ թաղային համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 24.000 գծամետր երկարությամբ, 12.300.000 դրամ հաշվեկշռային արժեքով ջրատար խողովակաշարը։

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքը (ավելացնելով նաև Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով հաստատված «Նոր Խարբերդ այգեգործական տնտեսության ջրամատակարարման բարելավում» ծրագրով նախատեսված՝ 59.375.489 դրամ արժեքով կատարված աշխատանքները) ամրացվում է «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին։

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝

1) մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմանագրի կնքումը։

2) երկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գույքը վարձակալության իրավունքով տրամադրել «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը և ապահովել «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ 2005 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված՝ «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության պայմանագրում համապատասխան փոփոխության կատարումը՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով։

4. Սահմանել, որ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված նվիրաբերության պայմանագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվում են Երևանի Շենգավիթ թաղային համայնքի, 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված համաձայնագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության, իսկ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը՝ «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2009 թ. փետրվարի 24
Երևան